

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ բաժնետիրոջը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

(1) ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից Ընկերության 2012-2014թթ. գործունեության մասով կատարված ստուգումների արդյունքներով (18.01.2016թ.-ին կազմված թիվ 30-Ա ակտ) Ընկերությանն առաջադրվել են 757.7 մլն դրամի չափով շահութաբաժնի և նրա գծով 166.4 մլն դրամի չափով հաշվարկված տույժերի լրացուցիչ պարտավորություն՝ հիմնականում կապված Իրան-Հայաստան գազատարի հաշվառման հետ:

Միաժամանակ առկա են ՀՀ վարչապետի հանձնարարականները (25.06.2016թ.-ի N02/23 15/2528-16 և 2017թ. հունվարի 12-ի թիվ N02/23 15/289-17)՝ նշված ակտը կասեցնելու և բարձրացված հարցերին գազատարի վաճառքի գործարքի ավարտից հետո անդադարեցնելու վերաբերյալ:

Գազատարի վաճառքի գործարքի ժամկետների և պայմանների, ինչպես նաև ակտի կիրառման հետևանքների անորոշությունների պատճառով մենք անկարող էինք գնահատել նշված հանգամանքների ազդեցությունը 31.12.2019թ.-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված պարտավորությունների, հետաձգված հարկային ակտիվների և կուտակված շահույթի վրա:

31.12.2018թ.-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորի եզրակացությունը այս հարցը ներառել է որպես վերապահումով կարծիքի հիմք:

(2) Ընկերությունը 2019թ. դեկտեմբերին միակողմանի լուծել է Liaoning-Efacec Electrical Equipment Co. LTD չինական ընկերության (այսուհետ՝ Կապալառու) հետ Շինուհայր և Ագարակ 2 ենթակայանների վերակառուցման համար 2016թ.-ի մայիսին կնքված պայմանագիրը: Պայմանագրի լուծումը պատճառաբանվել է Կապալառուի կողմից պարտականությունների շարունակական չկատարումը և շինարարական ավարտման ժամկետների խախտումը: Պայմանագրի խզման արդյունքում՝ Ընկերությունը չինական բանկից ստացել է պայմանագրի չկատարման բանկային երաշխիքի պայմանագրով նախատեսված 1.4 մլն դոլարի փոխհատուցում:

31.12.2019թ.-ի դրությամբ նշված պայմանագրի գծով առկա են հետևյալ մնացորդները.

- Ոչ ընթացիկ կանխավճարներ՝ 340 մլն դրամ, ներառված են 4,008 մլն դրամի ընդհանուր ներկայացված գումարում (Ծան. 14),
- Որպես հարկային գործակալ Կապալառուի փոխարեն վճարված ոչ ռեզիդենտի շահութահարկի մնացորդ՝ 95 մլն դրամի, ներառված է 2,059 մլն դրամի ներկայացված գումարում (Ծան. 13),

Անկախ աուդիտորի եզրակացություն (շարունակություն)

- Կրեդիտորական պարտքեր՝ 1,065 մլն դրամ, ներառված 14,012 մլն ներկայացված գումարում (Ծան. 21),
- Անավարտ շինարարության արժեք՝ 6,428 մլն դրամ, ներառված է 94,390 մլն դրամի ներկայացված գումարում (Ծան. 12):

Ընկերությունը պայմանագրի խզումից հետո չի հաստատել փոխհաշվարկները Կապալառուի հետ, ինչպես նաև չի գնահատել վերոնշյալ ակտիվների վերականգնվող արժեքը, չնայած առկա են արժեզրկման հայտանիշներ, որը չի համապատասխանում «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ին:

Նշված հանգամանքի բնույթից ելնելով, մենք անկարող էինք որոշել վերոնշյալ հարցերի ազդեցությունը Ընկերության 31.12.2019թ.-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ոչ ընթացիկ կանխավճարների, Կապալառուի փոխարեն վճարված ոչ ռեզիդենտի շահութահարկի մնացորդի, կրեդիտորական պարտքերի, վերակառուցվող հիմնական միջոցների արժեքի և հետաձգված հարկային ակտիվի վրա:

31.12.2018թ.-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորի եզրակացությունը այս հարցը ներառել է որպես վերապահումով կարծիքի հիմք:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությանց՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնադրքի (ՀՀՄՄԽ կանոնագիրք)*, և պահպանել ենք ՀՄԷՄԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում - հետագա դեպքեր

Ձեր ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից 25-րդ ծանոթագրությանը, որը ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող իրադարձությունների անորոշության ազդեցությունը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի կապակցությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Անկախ աուդիտորի եզրակացություն (շարունակություն)

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հասկոորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Անկախ աուդիտորի եզրակացություն (շարունակություն)

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2011թ. հունիսի 01-ին ստորագրված 8055-AM Վարկային համաձայնագրի և 2014թ.-ի Օգոստոսի 06-ին ստորագրված 8388-AM Վարկային համաձայնագրի 5-րդ բաժնի 1. (ա) կետի, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև ստորագրված ենթավարկային համաձայնագրերի դրույթների, Ընկերությունը չի կարող կուտակել նոր պարտքեր, քանի դեռ ԲԷՑ ՓԲԸ եկամուտների և ծախսերի հիմնավորված կանխատեսումները ցույց չեն տա, որ յուրաքանչյուր տարվա համար ԲԷՑ ՓԲԸ կողմից կանխատեսված զուտ եկամուտները առնվազն 1.2 անգամ գերազանցում են այդ տարվա ընթացքում բոլոր պարտքերի (ներառյալ նոր պարտքերը) սպասարկման համար անհրաժեշտ միջոցներին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Ասիական Զարգացման Բանկի(ԱԶԲ) միջև 2014թ. սեպտեմբերի 5-ին ստորագրված 3150-ARM վարկային համաձայնագրի ժամանակացույց 5-ի ֆինանսական ցուցանիշներ հոդված 4-ի Ընկերությունը պետք է ապահովի ֆինանսական ցուցանիշների թույլատրելի սահմաններ:

Մեր կարծիքով, 2019 ղեկունների 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է վարկային համաձայնագրերով սահմանված վավերապայմանները:

5 օգոստոս 2020

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն



Գևորգ Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար


«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

		2019թ.	2018թ.
	Ծնթ.	հազար դրամ	հազար դրամ
Հասույթ	5	7,698,785	7,857,221
Վաճառքի ինքնարժեք	6	(4,549,068)	(4,047,712)
Համախառն շահույթ		3,149,717	3,809,509
Այլ եկամուտ	7	1,208,981	143,288
Վարչական ծախսեր	8	(1,131,018)	(1,413,379)
Այլ ծախսեր	9	(760,075)	(807,500)
Գործառնական գործունեությունից շահույթ		2,467,605	1,731,918
Ֆինանսական եկամուտ	10	1,589,237	1,315,233
Ֆինանսական ծախսեր	10	(1,389,406)	(1,606,591)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		1,229,000	1,554,578
Շահույթ մինչև հարկումը		3,896,436	2,995,138
Շահութահարկի գծով ծախս	11	(1,457,420)	(554,692)
Տարվա զուտ շահույթ		2,439,016	2,440,446
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Տարվա ընդամենը համապարփակ արդյունք		2,439,016	2,440,446

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 8-53) հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից համար 5 օգոստոսի 2020թ., ստորագրությամբ՝


Հայկ Հարությունյան
Գլխավոր տնօրեն




Գևորգ Մուրադյան
Հաշվապահական հաշվառման բաժնի
պետ-Գլխավոր հաշվապահ

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.19թ. հազար դրամ	31.12.18թ. հազար դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	94,390,245	85,177,078
Ոչ նյութական ակտիվներ		101,164	128,025
Հետաձգված հարկային ակտիվներ	11	876,712	1,087,128
Երկարաժամկետ դեբիտորական պարտքեր	13	273,200	494,803
Կանխավճարներ հիմնական միջոցների գծով	14	4,008,557	5,841,190
		<u>99,649,878</u>	<u>92,728,224</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	2,161,670	2,019,772
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	1,786,379	2,077,147
Ժամկետային ավանդներ	16	5,724,458	6,804,127
Դրամական միջոցներ	17	10,356,637	6,413,756
		<u>20,029,144</u>	<u>17,314,802</u>
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		76,520	76,602
Ընդամենը ակտիվներ		<u>119,755,542</u>	<u>110,119,628</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		9,610,620	8,995,388
Էմիսիոն վնաս		(49,284)	(49,284)
Պահուստային կապիտալ		451,842	272,344
Կուտակված շահույթ		15,848,834	14,204,548
	18	<u>25,862,012</u>	<u>23,422,996</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	75,305,534	64,383,189
Ակտիվների վերաբերող շնորհներ	20	517,747	518,142
Պահուստներ	22	586,878	-
		<u>76,410,159</u>	<u>64,901,331</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	2,377,970	4,018,182
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		1,093,701	981,747
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	14,011,700	16,795,372
		<u>17,483,371</u>	<u>21,795,301</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>119,755,542</u>	<u>110,119,628</u>

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթ.	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Տարվա շահույթ		2,439,016	2,440,446
Շահութահարկի գծով ծախս		1,457,420	554,692
		3,896,436	2,995,138
Ճշգրտումներ			
Մաշվածություն և ամորտիզացիա		3,690,782	3,620,405
Հիմնական միջոցների օտարումից վնաս/(օգուտ)		(41,280)	1,151
Ակտիվների գույքագրումից առաջացած օգուտ		(88,965)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկումից և դուրսգրումից վնաս		88,286	-
Պաշարների օտարումից և դուրսգրումներից վնաս		5,895	10,465
Տոկոսային ծախս		1,389,406	1,606,591
Ֆինանսական եկամուտ		(1,589,237)	(1,315,233)
Այլ օգուտ/վնաս		(855,440)	-
Շնորհներից եկամուտ		(3,011)	(904)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		(1,229,000)	(1,554,578)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		5,263,872	5,363,035
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		560,926	1,434,328
Պաշարների փոփոխություն		(42,287)	(250,518)
Պահուստների փոփոխություն		704,505	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		1,330,968	1,661,907
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		7,817,984	8,208,752
Վճարված շահութահարկ		(1,135,050)	(1,529,993)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		6,682,934	6,678,759
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերումների գծով վճարներ		(13,154,672)	(16,216,159)
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր		50,000	2,750
Փոխառությունների մարում		1,772	320
Ժամկետային ավանդների ներդրում		1,223,875	738,038
Ստացված տոկոսային եկամուտ		1,321,094	1,315,233
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(10,557,931)	(14,159,818)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարկերից և փոխառություններից մուտքեր	19	12,018,212	15,362,954
Վարկերի և փոխառությունների մարումներ	19	(1,642,664)	(1,279,596)
Վճարված տոկոսներ	19	(2,549,811)	(1,922,415)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		7,825,737	12,160,943
Դրամական միջոցների զուտ աճ		3,950,740	4,679,884
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		(7,859)	6,168
Դրամական միջոցների մանցորդը տարեսկզբին		6,413,756	1,727,704
Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին	17	10,356,637	6,413,756

«Բարձրավորտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն վնաս	Այլ պահուստներ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդներ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	8,995,388	(49,284)	272,344	14,204,548	23,422,996
Տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	2,439,016	2,439,016
Տարվա զուտ շահույթ	-	-	-	2,439,016	2,439,016
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	615,232	-	-	(615,232)	-
Բաժնետիրական կապիտալի ավելացում կուտակված շահաբաժնի հաշվին	-	-	179,498	(179,498)	-
Փոխանցում պահուստային կապիտալին	615,232	-	179,498	(794,730)	-
Ընդամենը բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից	9,610,620	(49,284)	451,842	15,848,834	25,862,012
Մնացորդներ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Զբաղիված եկամուտ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	8,995,388	(49,284)	272,344	11,764,102	20,982,550
Տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	2,440,446	2,440,446
Տարվա զուտ շահույթ	-	-	-	2,440,446	2,440,446
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	8,995,388	(49,284)	272,344	14,204,548	23,422,996
Մնացորդներ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					